ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1956 Общественные науки

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ «ԳՈԼՈՎԻՆՈՅԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ»

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Հ. Մարտիրոսյանի «Գոլովինոյի պեղումները» աշխատությունը, որը նվիրված է Հայաստանի 7—6 դդ. (մ. թ. ա.) նյութական կուլտուրայի հուշարձանների ուսումնասիրությանը:

Քննարկվող ժամանակաշրջանն ընդգրկում է Առաջավոր Ասիայի և մասնավորապես Հայաստանի պատմության ամենանշանակալից շրջաններից մեկը, երբ պատմական թատերաբեմից անհետանում է Ուրարտուի հզոր հակառակորդ Ասորեստանը, ապա Ուրարտական պետությունը, որով և արագանում է Արևելքի մի շարք ժողովուրդների կազմավորման պրոցեսը:

Հայաստանի տերիտորիայում բնակվող ցեղերի, ցեղախմբերի մշակույթի բնաղավառում այդ ժամանակաշրջանը նշանավորվեց երկաթի լայն տարածումով, երբ տնտեսության մեջ լայն կիրառություն են ստանում երկաթե գործիքներն ու զենքերը: Տեղաբնակ ցեղերի, ցեղախմբերի կուլտուր-տնտեսական միևնույն մակարդակը, մետաղամշակության, հողագործության, անասնապահության զարգացումը, ինտենսիվ կապերը հին Արևելքի հետ, ռեալ պայմաններ են ստեղծում մետաղամշակման փոքր օջախների երևան գալու համար՝ նաև դաշտային շրջաններում:

Հողագործության, մասնավորապես անասնապահության հետագա զարգացումը մղում էր դեպի նոր հողերի յուրացումն ու նվաճումը, որը տեղի էր ունենում միջցեղային կռիվների միջոցով: Միմյանց թշնամի ցեղերի հաճախակի ընդհարումները ստրկական աշխատանքի լայն օգտագործման հնարավորություններ են ստեղծում, իսկ երկաթե գործիքների կիրառումը արտադրության մեջ, նոր, ավելի բարձր աստիճանի է հասցնում աշխատանքի արտադրողականությունը: Այս երևույթներին համընթաց աճում է գույքային անհավասարությունը, դնալով խորանում է դասակարգային շերտավորման պրոցեսը:

Հ. Մարտիրոսյանի ուշադրավ ուսումնասիրությունը, որը կառուցված է պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի էքսպեդիցիայի 1929 թ. և հեղինակի կողմից 1950 թ. Դիլիջանի մոտ՝ Գոլովինոյում կատարված պեղումների, ինչպես նաև հնագիտական այլ աշխատանքների արդյունքների քննության հիման վրա, Հայաստանի 7—6-րդ դդ. մ.թ.ա. նյութական կուլտուրայի հարցերի վերհանմանը նվիրված առայժմ միակ աշխատությունն է:

Չնայած այն հանգամանքին, որ պատմական Հայաստանի բազմաթիվ շրջաններ հնագիտական տեսակետից դեռևս չեն ուսումնասիրված և դրախոսվող աշխատությունը շարադրված է գերազանցապես Հայկական ՍՍՌ տերիտորիայի տեղաբնակ հնագույն ցեղերի նյութական կուլտուրայի ուսումնասիրության հիման վրա, հեղինակին հաջողվել է ընդհանրացնել այդ ժամանակաշրջանը բնութագրող նյութը՝ կապելով այն այլ շրջանների բնիկ ցեղերի, ինչպես նաև ուրարտացիների և սկյութների կուլտուրայի հետ:

Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա հիմնավորում է այն թեզը, թե ուրարտական կուլտուրայի ազդեցությունը կարևոր պայման է հանդիսացել երկաթե ինդուստրիայի ինտենսիվ զարգացման համար և որ այդ պրոցեսն ընդգրկել է ոչ միայն Հայաստանը, այլև Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը: Այդ տեսակետից արժեքավոր է երկաթե գործիքների ու զենքի մանրամասն մասնագիտական անալիզը, որի հիման վրա հեղինակին հաջողվել է ուրվագծել երկաթի լայն տարածման բարդ պրոցեսը, ներկայացնելով այն որպես տեղակալն բազայի վրա խարսխվող արտադրության, որը արագ կերպով զարգացավ և բարձր մակարդակի հասավ շնորհիվ ուրարտական ազդեցության:

Երկաթի տարածումով մարդկության նշանակալից մասը թևակոխում է նախնադարյան պատմության վերջին փուլը, որը Ֆ. Էնգելսն անվանել է «երկաթե սրի, բայց դրա հետ միասին նաև երկաթե խոփի և կացնի» դարաշրջան: Երկաթը արագ կերպով թափանցելով արտադրության, կենցաղի, ռազմական գործի բնագավառները, արմատական հեղա-

շրջում է կատարում։ Երկաթի տարածումը թույլ է տալիս նշանակալից մասշտաբներով մշակելու ոչ միայն անտառագուրկ, այլև անտառաշատ տեղերը։ Հեղինակն այդ վճռական տեղաշարժի կարևորությունն ընդգծելով, այնուհետև ցույց է տալիս, որ դա միայն նյութական արտադրության բնագավառով չսպառվեց. այդ տեղաշարժը որոշակի փոփոխություններ երևան բերեց նաև ցեղային միավորումների սոցիալ-տնտեսական կյանքում։ Սոցիալական, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական կյանքի ոլորտներում կատարված այդ արմատական փոփոխությունները ի վերջո հանգեցրին էթնիկ խոշոր միավորման՝ հայ ժողովրդի կազմավորմանը։

Քննության առնելով պեղումներից հայտնաբերված 7—6-րդ դդ. մ. թ. ա. պատկանող հարուստ, խիստ ուշագրավ նյութը, թվագրելով ու դասդասելով այն ըստ տեղի ու ժամանակի, հեղինակը կարողացել է այդ նյութերը կապել մերձակա բնավայրերի ուսումնասիրության հետ։ Այդ եղանակով հեղինակին հաջողվել է ուրվագծել այն տերիտորիան, ուր բնակվում էին 7—6 դդ. մ. թ. ա. բարձր կուլտուրա ունեցող ցեղախմբերը։ Հեղինակի կողմից տերիտորիալ շրջանակների ուրվագծումն, իհարկե, չի կարող վերջնական համարվել։ Հնագիտական նորանոր հայտնագործությունների հիման վրա այն հետագայում կարող է լրացվել, ճշգրտվել, սակայն, այն, ինչ կատարել է ընկ. Մարտիրոսյանը, արժանի է ուշադրության։ Հեղինակն իր կողմից առաջ բաշվող թեզերը հիմնավորելու համար բերում է ոչ միայն Հայաստանում և Անդրկովկասում հայտնի սինխրոն հուշարձանները, այլև այն համեմատում է Կուբանի և Ռնեպրի ավազանների հուշարձանների հետ։

Աշխատության «Հայաստանում երկաթի էպոխայի հնագիտական հուշարձանների ուսումնասիրության համառոտ ակնարկ» գլխում հեղինակը արժեքավորել և հանրագումարի է բերել Հայաստանում այս էպոխայի ուսումնասիրության ուղղությամբ կատարված հնագիտական պեղումների արդյունքները. ընդգրկել է դպայի չափով նոր նյութեր. հաշվի է առել Անդրկովկասի առավել հետաքրքիր հնավայրերի պեղումները։

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Գալովինո գյուղի մոտ գտնվող հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը։ 1929 թ. Խրտանոցի ձորում ազյուսի գործարանի շինարարության ժամանակ կատարված այդ դամբարանաղաշտի պեղումները կարևոր նշանակություն ունեցող նյութ երևան բերին, որը վառ կերպով իլյուստրացիայի է ենթարկում Անդրկովկասի տեղարնակ ցեղերի, ինչպես նաև Արևելքի ու Անդրկովկասի միջև եղած կուլտուրական փոխհարաբերությունները։ Հնագիտական այդ մեծարժեք հավաքածուն դասդասված է ըստ հիմնական խմբերի և ենթախմբերի, նկատի ունենալով նրանց ֆունկցիոնալ նշանակությունը, տիպոլոգիական առանձնահատկությունները, մնալոգիկ կապերն ու ընդհանուր բնութագիրը։

Զենքի, հանդերձանքի, բրոնզե ամանեղենի, խեցեղենի և զարդարանքի առարկաների ուսումնասիրությանը նվիրված ստորաբաժանումներում խմբավորված են 7—6 դդ. մ. թ. ա. համար բնորոշ առարկաների նմուշները և առանձին ուշադրություն է դարձված նյութական կուլտուրայի այն հուշարձաններին, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են կուլտուրական կապերի ու փոխազդեցությունների առկայությունը։ Այդ տեսակետից առանձնապես հետաքրքրական է երկաթե տեղերի, դաշույնների ու դանակների, պատկերազարդ բրոնզե դոտիների ու ֆիբուլաների, ինչպես նաև խեցեղեն նմուշների համեմատական ուսումնասիրությունը, որով հեղինակին հաջողվել է ապացուցել, որ քննարկվող ժամանակաշրջանի կուլտուրան իր հիմքում չի կապվում հեթիթական և կիմմերական կուլտուրաների հետ, ինչպես կարծում էին որոշ գիտնականներ։ Ցույց է տրված երկաթե զենքի դերակշռությունը բրոնզի նկատմամբ։ Բրոնզից, արծաթից, կիսաթանկարժեք քարերից, հասպիսից, պաստայից և այլ նյութերից պատրաստված զարդերի նկարագրությունը հնարավորություն է տալիս վերականգնելու տեղարնակների արտաքին տեսքը, լրացնում է զենքին ու հանդերձանքին նվիրված ենթաբաժինները։ Այստեղ նույնպես առանձնացված են այն առարկաները, որոնք ներմուծվել են այլ շրջաններից ու տարածվել Կովկասի տարբեր վայրերում։

Չնայած այն բոլոր դժվարություններին, որոնք կանգնում են դոկումենտացիայից դուրս հավաքածուները ուսումնասիրողների առջև, քննարկվող գլխում համոզիչ կերպով որոշված է № 8 կրոմլեխի դամբարանային կոմպլեքսը, որի քննությունից երևում է, որ այդ՝ ինչպես նաև շատ ուրիշ կրոմլեխներ ծառայել են կոլեկտիվ թաղումների համար։ Շարունակելով իր կողմից պեղված կրոմլեխների ուսումնասիրությունը Հ. Մարտիրոսյանը կրոմլեխների դասավորության, կոնստրուկտիվ, տեխնիկական և այլ առանձնա-

հատկությունների, ինչպես նաև թաղման ձևերի ու ծեսերի վերլուծման եղանակով ներկայացնում է տոհմացեղային դամբարանադաշտերի պատկերը, որտեղ դոյություն ունեին արդեն ինչպես ընտանեկան և այնպես էլ անհատական թաղումներ։ Հեղինակի՝ այս դիտողությունը արժեքավոր է մեծ ընտանիքի զարդացման փուլերից մեկն ուսումնասիրելու տեսակետից։ Պեղումներով հայտնաբերված նյութի համեմատական նկարագրությունը համոզում է, որ նրանք չեն տարբերվում 1929 թ. հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացուկներից։ Այնուհետև՝ հակիրճ կերպով ամփոփված է հեղինակի կողմից 1930 թ. Դոլովինոյի հյուսիսային մասում ուսումնասիրված դամբարանների նյութը։ Քննարկվող գլխում հետաքրքրություն է ներկայացնում Խրտանոցի դամբարանադաշտից ոչ հեռու հայտնաբերված բնակավայրի նկարագրությունը, որը պաշտպանված է կիկլոպյան հաստահեղույս պատով։ Հեղինակին չի հաջողվել այստեղ կատարել զոնե հետախուզական պեղումներ, սակայն բերված փաստերը վկայում են, որ կրոմլեխներին նմանվող, բայց ավելի մեծ ու իրար կից, այդ կառուցումները իրենցից ներկայացնում են հին բնակավայրի մնացորդներ. դրա հետ կապված համոզիչ տեղեկություններ են բերվում Սևանի ավազանի Դարալագյազի, Արագածի սիստեմում հայտնաբերված մեծ բնակատեղիների մասին և հաստատվում է, որ բնակարանի հիմնական ձևերից մեկը առաջին հազարամյակի սկզբում եղել է օվալաձև կամ կլոր տարածական լուծումով։

Աշխատության երրորդ գլխում հեղինակը նպատակ է դրել ցույց տալ, որ Խրտանոցի դամբարանադաշտին ու բնակավայրին հա-ակակից և նույն մշակույթը ներկայացնող հնագիտական օբյեկտները սփռված են Հայաստանի ամբողջ տերիտորիայի վրա։ Այդ միտքն ապացուցելու համար քննության են առնված Դոլովինոյից հարավ և հյուսիս ընկնող հուշարձանների ամբողջ խմբեր. մի կողմից Ախտայի, Նոր Բայազետի, Մարտունու և Սիսիանի շրջանների հնագիտական կոմպլեքսները և մյուս կողմից՝ Ալավերդու շրջանի (Մատուռ, Հաղբատ, Ախթալա, Մուսիերի, Շեյթանդաղ) բացառիկ հարուստ և լավ թվագրվող նյութերը։ Հնագիտական որոշակի կոմպլեքսների վերլուծության հիման վրա բնութագրված են այդ հուշարձանների ընդհանուր և տարբերիչ գծերը, ցույց է տրված, որ նրանք բոլորն էլ պատկանում են միևնույն ժամանակին ու կուլտուրային։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ մատնանշված հնավայրերը ներկայացված են այս բաժնում Վրացական ՍՍՌ տերիտորիայում հայտնաբերված անալոգիկ նյութերի հետ ունեցած սերտ կապի մեջ (Դմանիսի, Ծալկա, Մցխեթա, Դվանի)։ Խուսափելով կրկնությունից՝ Հ. Մարտիրոսյանը քննարկվող բաժնում չի վերլուծել մեծ հետաքրքրություն ներկայացնող՝ հրատարակված մի երկու կոմպլեքս, որոնց ընդգրկումով աշխատությունն անպայման կշահեր։ Չնայած այդ հանգամանքին՝ 7—6 դդ. (մ. թ. ա.) հնագիտական հուշարձանների տարածման օրբիտը որոշելու համար հաշվի են առնված Անդրկովկասի հնագիտության մեջ առայժմ հայտնի բոլոր նյութերը, որոնք հնարավորություն են ընձեռել եզրակացնելու թե 7—6 դդ. մ. թ. ա. հնավայրերն իրենց տեղադրության տեսակետից համընկնում են էնեոլիթյան բնակատեղիներին, որոնք տարածված էին Քուռ և Արաքս գետերի միջին հոսանքում։ Անդրադառնալով երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի կուլտուրայի բնութագրման հարցին, հեղինակը իրավացի կերպով ընդգծում է հնագույն բնակատեղիների ուսումնասիրման անհրաժեշտությունը, որն անհամեմատ ավելի լայն հնարավորություններ կստեղծի ժամանակի նյութական արտադրության ու կենցաղի հարցերը պատշաճ կերպով լուսաբանելու համար։ Այս տեսակետից առանձնապես կարևոր է այն հանգամանքը, որ դրախոսվող աշխատության մեջ գտալի տեղ է հատկացված ուրարտական 7-րդ դ. (մ. թ. ա.) բնակատեղի Թեյշեբաինիի (Կարմիր բլուրի) պեղումներին, որոնց արդյունքները չափազանց մեծ նշանակություն ունեն տեղարնակ ցեղերի կուլտուրան ուսումնասիրելու տեսակետից։

Աշխատության չորրորդ գլխում Խրտանոցից հայտնաբերված նյութերի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա քննության է առնված Հայաստանի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի հնագիտական հուշարձանների թվագրման խնդիրը։ Այդ խնդիրը լուծելու համար հեղինակը չի սահմանափակվել անդրկովկասյան հնագիտության տվյալներով։ Ապացուցելով կուլտուրական սերտ փոխհարաբերությունները առկայությունը մի կողմից մերձդնեպրյան, հյուսիս-կովկասյան և մերձուրմիական սկյութների ու Հայաստանի տեղարնակ ցեղերի, մյուս կողմից վերջիններիս և ուրարտացիների միջև, հեղինակը խաչաձև ստուգման է ենթարկել իր կողմից տրված թվագրությունը։ Ավելի համոզիչ դարձնելու նկատառումով ցույց է տրված առարկաների հիմնական տիպերի հա-

մեմասական զարգացումը վաղ և ուշ շրջանների մետաղագործության մակարդակի տեսակետից։

Աշխատության վերջին գլուխը կրում է «Նախնադարյան համայնական կարգերի քայքայումը Հայաստանում» խորագիրը։ Հնագիտական ամբողջ նյութն ամփոփելով հեղինակին հաջողվել է կոնկրետ ու հակիրճ կերպով բնութագրել Հայաստանի տեղաբնակների պատմության այն հատվածը, որը նախորդում է Երվանդյանների հրապարակ գալուն։ Գոյություն ունեցող տվյալների հիման վրա քննության առնելով խրիզացիոն ցանցի, երկրագործության, անասնապահության, մետաղամշակության, փոխանակության զարգացման խնդիրները՝ հեղինակը հանդում է այն եզրակացության, թե տնտեսության այդպիսի վիճակը նախապայման էր հանդիսանում հասարակական զարգացման նոր էտապի անցնելու համար։ Հետաքրքրություն են ներկայացնում այն նյութերը, որոնք վկայում են հասարակական շերտավորման պրոցեսի առաջացման, ինչպես նաև ստրկական աշխատանքի կիրառման մասին։ Հեղինակն այնուհետև խոսում է ուրարտական պետության անկման, ցեղային միությունների միավորման և դրա հիման վրա էթնիկ խոշոր միավորման՝ հայ ժողովրդի կազմավորման մասին։

Աշխատության մեջ, չնայած բերված անալոգիաներին, այլ տեղերից հայտնի նույնական նյութի իլյուստրացիային, Մինգեչաուրի նյութի իլյուստրացիան քիչ է, գրեթե բացակայում է իրրև համեմատական նյութ։ Ճիշտ է Մինգեչաուրի նյութը դեռևս առանձին մենագրություններով հրապարակ չի եկել, սակայն հրատարակված են մի քանի հոդվածներ, ուստի վատ չէր լինի վերջիններիս մեջ բերված նյութի օգտագործումը։ Աշխատության մեջ որոշ տեղերում տեղանունները միայն նախկինում ընդունված ձևով են անվանված (այսպես, օրինակ, Ալիդոբխ՝ այժմ Աստղաձոր, Փաշաքենդ՝ այժմ Հացառատ և այլն)։

Այս և վերևում նշված այլ թերությունները չեն նսեմացնում այն շնորհակալ աշխատանքը, որ կատարել է Հ. Մարտիրոսյանը իր «Գոլովինոյի պեղումները» աշխատությամբ։

ԳՐ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ